

Ի-Վի Քոնսալթինգն առաջարկում է շուկայի հետազոտությունների արագ և նվազ ծախսատար իրականացման միանգամայն նոր լուծում «CATI» համակարգի միջոցով

Յուլիսի 22, 2009թ.
Երևան

Ի-Վի Քոնսալթինգը հիմնել է ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած «CATI» (հեռախոսային հարցումներ համակարգչի կիրառմամբ) համակարգը, որն իր «TCI» բաղկացուցիչով հնարավորություն է տալիս ապահովել հարցման ձայնագրման բարձրակարգ որակ: Մեր ծառայությունների բարձր որակը երաշխավորելու նպատակով որպես մատակարար ենք ընտրել նմանատիպ տեխնոլոգիաների բնագավառում աշխարհի առաջատար ընկերություններին. «ConfirmIt» ընկերությանը՝ «Bellview Fusion» համակարգչային ապահովման ծրագրի և «TCI» մոդուլի համար, և «Intel» ընկերությանը՝ հարցումների ձայնագրման և հեռախոսագանգերի ավտոմատ կատարման համար նախատեսված համապատասխան համակարգչային սարքավորումների համար: «CATI» համակարգում ներդրված «TCI» տեխնոլոգիան թույլ է տալիս ձայնագրել բոլոր հեռախոսային հարցումները՝ հարցման ընթացիկ վերահսկման համար, ինչպես նաև օգտագործել հեռախոսագանգերի ավտոմատ կատարման հնարավորությունը՝ կրճատելու հարցումների իրականացման տևողությունը:

CATI համակարգի հինգ գլխավոր առավելությունները

1. **Հարցման ավելի կարճ տևողություն.** Լայն աշխարհագրական տարածմամբ մեծաքանակ ընտրանքի վերաբերյալ արդյունքների արագ ստացում
2. **Հարցվողների ավելի մեծ հասանելիություն.** Հարցման մեջ այնպիսի խմբերի ներգրավման հնարավորություն, որոնք այլ դեպքերում հիմնականում հասանելի չեն (հատկապես բարձր եկամտային խմբերին)
3. **Տվյալների ավելի բարձր որակ.** Ապահովում է տվյալների հավաքման և մշակման ավելի բարձր որակ և ճշգրտություն
4. **Հարցազրուցավարների ավելի լավ վերահսկողություն.** Ապահովում է առավել արդյունավետ վերահսկողություն հարցման 100% ձայնագրման միջոցով, ինչպես նաև հաճախորդի կողմից ընթացիկ գործընթացի դիտանցման հնարավորություն
5. **Ավելի ցածր ծախսեր.** Մեկ հարցման հաշվով ծախսերի կրճատում՝ շնորհիվ տրանսպորտային, հարցաշարի տպման և մուտքագրման հետ կապված լրացուցիչ ծախսերի չկատարման:

«CATI»-ի բոլոր հարցազրուցավարներին խստիվ վերահսկում են նախագծի ղեկավարը և հարցման գործընթացի պատասխանատուն: Յուրաքանչյուր նախագծից առաջ իրականացվում է հարցազրուցավարների վերապատրաստում:

«CATI» համակարգ



Ստորև ներկայացնում ենք շուկայական հետազոտությունների որոշ հնարավոր տարբերակներ, որոնք կարող են իրականացվել «CATI»-ի միջոցով.

- Սպառողների բավարարվածության հետազոտություն
- Բրենդերի համեմատական գնահատում և շուկայի սեզմենտավորում
- Բրենդերի իրազեկության և հավատարմության հետազոտություն
- Գովազդների արդյունավետության գնահատում և այլն:

Ի-Վի Քոնսալթինգը պատրաստ է համագործակցել Ձեզ հետ շուկայական հետազոտությունների Ձեր կարիքները բացահայտելու և գնահատելու համար, ինչպես նաև մշակել և իրականացնել այդ ուսումնասիրությունները: Շուկայական հետազոտությունների վերաբերյալ մեր առաջարկների, ինչպես նաև այլ ծառայությունների մասին առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել մեր կայք էջի հետևյալ բաժինը` <http://www.evconsulting.am/en/ServiceLines/>:

Չոփսեփ Էմին 123
Երևան 0051
Ֆեռ: +37410 219740
E-mail: info@ev.am
www.evconsulting.am